

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«28» օգոստոս 2020թ.

No 2935 - Լ

«ԲԻՆԱՐ ՕՔՍԻ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «ԲԻՆԱՐ ՕՔՍԻ» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

«ԲԻՆԱՐ ՕՔՍԻ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ԲԻՆԱՐ օքսի» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է թափանցիկ կամ թույլ օպալեսցենտող, յուրահատուկ հոտով համասեռ հեղուկ: Որպես ազդող նյութեր՝ պարունակում է. ջրածնի պերօքսիդ՝ 9,0%, ալկիլդիմեթիլբենզիլ ամոնիումի քլորիդ՝ 4,0%, պոլիհեքսամեթիլեն բիգուանիդ հիդրոքլորիդ՝ 2,0%, ինչպես նաև մաքրված ջուր և ֆունկցիոնալ բաղադրիչներ, ներառյալ ոչ իոնոգեն մակերեսային ակտիվ նյութեր և կոռոզիայի ինհիբիտոր: Միջոցի pH-ը՝ 5,0 միավոր է: Միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի բնօրինակ փակ փաթեթավորմամբ 2 տարի է՝ պահման և տեղափոխման պայմանները պահպանելու դեպքում, աշխատանքային լուծույթներինը՝ 30 օր՝ պատրաստման պահից սկսած, ջրի որակին և ջերմաստիճանին ներկայացվող պահանջները պահպանելու դեպքում: Միջոցը թողարկվում է 0,1-ից մինչև 2 դմ³ պոլիմերային սրվակներով, 1-ից մինչև 50 դմ³ տարողությամբ դեգազացնող կափույրով կափարիչներով պոլիմերային կանիստրներով, կամ ցանկացած այլ՝ սպառողի և տվյալ արտադրանքի համար ընդունելի տարայով:

2. Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ, այդ թվում մանրէասպան հատկություններով գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ (ներառյալ տուբերկուլոզի՝ թեստավորված Մ. Տերրայի (*M.terrae*) վրա, բժշկական միջամտությամբ պայմանավորված վարակների՝ թեստավորված Պ. Աերուգինոսայի (*P.aeruginosa*) վրա, անաէրոբ վարակների՝ թեստավորված Կ. Դիֆիսիլեի (*C.difficile*) վրա, հատուկ վտանգավոր և կարանտինային վարակների (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա, սիբիրյան խոց), լեգիոնելոզի հարուցիչների), վիրուսասպան ակտիվությամբ՝ մարդու բուլոր հայտնի ախտածին վիրուսների նկատմամբ (այդ թվում

ընդերային, արտաընդերային հեպատիտներ Ա-ի, Բ-ի, Ց-ի, ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի հարուցիչների, Կոքսակի էնտերովիրուսների, ECHO, ռոտավիրուսների, նորովիրուսների, կորոնավիրուսների, «ատիպիկ թոքաբորբի» (SARS), հերպեսի, H5N1 «թռչնի» գրիպի, H1N1 «խոզի» գրիպի, մարդու գրիպի, պարագրիպի վիրուսների, ադենովիրուսների և այլն), սնկասպան ակտիվությամբ (այդ թվում Կանդիդա ցեղի ախտածին սնկերի, դերմատոֆիտների, բորբոսասնկերի նկատմամբ), սպորասպան ակտիվությամբ, օվոցիդ հատկություններով՝ էնտերոբիոզի հարուցիչների նկատմամբ: Միջոցի աշխատանքային լուծույթները օժտված են լվացող, սպիտակեցնող և դեզոդորացնող հատկություններով, մշակված մակերեսների վրա երկարացված ազդեցությամբ 3 ժամվա ընթացքում, չեն ամրակցում օրգանական աղտոտվածությունները, չեն գունաթափում գործվածքները, կիրառման առաջարկվող ռեժիմներով չեն փչացնում մշակվող մակերեսները և փայտյա, այդ թվում լաքաներկային ծածկույթով, ապակյա, այդ թվում հայելային, պոլիմերային նյութերից, այդ թվում պլաստիկից, լինոլեումից, ռետինե, կերամիկայից, տեքստիլից, կաշվից, հախճապակուց, սալիկապատ, կոռոզիակայուն մետաղներից և կոռոզիակայուն ծածկույթ ունեցող մետաղներից օբյեկտները: Պատրաստուկի հատկությունները թույլ են տալիս համակցել մեկ գործողության մեջ մշակվող մակերեսների և օբյեկտների լվացումը, ախտահանումը և դեզոդորացումը: Մշակումն իրականացվում է շփման, ռոտման, թրջման և ընկղմման եղանակներով: Ցողման եղանակով ախտահանումն իրականացնում են ախտահանոմ իրականացնող հաստատությունների և կազմակերպությունների մասնագիտացված բրիգադները: Միջոցը սառչում է մինուս 5°C-ից ցածր ջերմաստիճանների ժամանակ, բնական պայմաններում հետագա հալելու ժամանակ ամբողջությամբ վերականգնում է իր սպառողական և ֆիզիկաքիմիական հատկությունները: Միջոցը և նրա աշխատանքային լուծույթները չի թույլատրվում խառնել օճառների, լվացող և ախտահանող միջոցների հետ, այդ թվում անիոնային մակերեսային ակտիվ նյութեր պարունակող:

3. Ըստ սուր թունավորության չափանիշների, միջոցը ԳՈՍ 12.1.007-76 համապատասխան, պատկանում է չափավոր վտանգավոր նյութերի 3-րդ դասին՝ ստամոքս ներմուծելու ժամանակ, քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին՝ մաշկի վրա լցվելիս և ներշնչական (ինհալացիոն) ազդեցության ժամանակ՝ ըստ ցնդելիության աստիճանի, որովայնի խոռոչ ներմուծելիս պատկանում է քիչ թունավոր նյութերի 4-րդ

դասին՝ ըստ Կ. Կ. Սիդորովի դասակարգման, առաջացնում է աչքի լորձաթաղանթի արտահայտված գրգռվածություն, ցուցաբերում է չափավոր տեղային-գրգռիչ ազդեցություն մաշկի վրա, օժտված է թույլ գերզգայունացնող ազդեցությամբ: Միջոցի աշխատանքային լուծույթները գոլորշիների և աէրոզոլի տեսքով ներշնչական ազդեցության ժամանակ առաջացնում են շնչառական օրգանների և աչքերի գրգռվածություն: Միջոցի 0.25-10.0% (ըստ պատրաստուկի) խտությամբ աշխատանքային լուծույթները բազմակի ազդեցության ժամանակ առաջացնում են մաշկի չորություն և թեփոտում, միջոցի 10.0-30.0% (ըստ պատրաստուկի) խտությամբ լուծույթներն օժտված են տեղային գրգռող ազդեցությամբ մաշկի վրա: 0.25% (ըստ պատրաստուկի) խտությամբ աշխատանքային լուծույթները չեն գրգռում մաշկը միանվագ ազդեցության ժամանակ, միջոցի 0.5% և բարձր խտությամբ աշխատանքային լուծույթները ցուցաբերում են գրգռիչ ազդեցություն աչքի լորձաթաղանթի վրա, հնարավոր է աչքի եղջերաթաղանթի անդառնալի վնասում, մինչև 0,5% խտությամբ լուծույթները աչքերի գրգռվածություն չեն առաջացնում: Աշխատանքային լուծույթները աէրոզոլի ձևով կիրառման ռեժիմներով ներշնչական ազդեցության ժամանակ օժտված են գրգռիչ ազդեցությամբ շնչառական օրգանների և աչքերի լորձաթաղանթի վրա: Ազդող նյութերի սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ) աշխատանքային գոտու օդում կազմում է. ջրածնի պերօքսիդի համար՝ 0,3 մգ/մ³ (գոլորշիներ+աէրոզոլ, վտանգավորության 3-րդ դաս, պահանջվում է մաշկի և աչքերի հատուկ պաշտպանություն), ՉԱՄ (չորորդային ամոնիումային միացություններ) համար (C12-18)՝ 1,0 մգ/մ³ (աէրոզոլ, պահանջվում է մաշկի և աչքերի պաշտպանություն), ՊՀՄԲ (պոլիհեքսամեթիլեն բիգուանիդին) համար՝ 2 մգ/ մ³ (աէրոզոլ, վտանգավորության 3-րդ դաս):

4. Միջոցը նախատեսված է տարբեր ուղղվածության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն) (այդ թվում վիրաբուժական, թերապևտիկ, մանկաբարձագինեկոլոգիական, մաշկա-վեներաբանական, մանկաբուժական բաժանմունքներում և այլն), դեղագործական և դեղատնային հաստատություններում և առողջապահական կազմակերպություններում¹, գիտական և փորձագիտական լաբորատորիաներում,

¹ Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ բոլոր մակարդակների և գերատեսչական ենթակայության, ներառյալ ամբուլատոր-պոլիկլինիկական, արամնաբուժական և սրացիոնար, բուժակ-մանկաբարձական կետեր, օրգանների փոխպատվաստման կետեր, բժշկական

ինչպես նաև այլ օբյեկտներում² կանխարգելիչ, ընթացիկ և եզրափակիչ օրինակներ, մանրէագրման, հիմնական մաքրում իրականացնելու, մակերեսների և օբյեկտների դեզինվազիայի և հեղինջագրման համար:

5. Միջոցը նախատեսված է.

1) Սենքերում մակերեսների (հատակ, պատեր, դռներ և այլն), կոշտ գույքի, այդ թվում բարուրասեղանների, ինտերիերի և կահավորանքի պարագաների, հարթ և գորգային հատակի ծածկույթների և երեսապատման գործվածքների, սարքերի, սարքավորումների մակերեսների, այդ թվում լուսավորող և չափիչ սարքավորումների, մանրէասպան լամպերի օրինակներ, լվացման և դեզոդորացման համար, այդ թվում՝ համակցված մեկ գործողության մեջ:

2) Կուլեզների, դրանց մասերի և հարմարանքների օրինակներ համար:

3) Անխթեզիոլոգիական սարքավորումների, նարկոզա-շնչառական սարքերի և դրանց կից համալրող հարմարանքների և մասերի (ներառյալ ռետինե խողովակները) օրինակներ համար:

պրոֆիլային կենտրոններ, հակապոլիոմիոզային դիսպանսերներ, ամբուլատորիա, հոսպիտալ, արյան փոխներարկման ծառայություն, բժշկա-սանիտարական մաս, ծննդատուն, ծննդաբերական բաժանմունք (այդ թվում նեոնատոլոգիայի և արտամարմնային բեղմնավորման, մանկական բաժանմունքներ), ախտաբանանատոմիական, ակնաբուժական, ֆիզիոթերապևտիկ և այլ բաժանմունքներ, դիախեզարան, հիվանդությունների կանխարգելման կազմակերպություններ, ախտաբանական կայաններ, սանթոլարան, վարակի օջախներ, սանիտարական տնտեսություն, շրջապատ և անհետաձգելի բժշկական օգնության կայաններ, ախտաբանանատոմիական, կլինիկական և ախտորոշիչ լաբորատորիաներ (այդ թվում կենսաքիմիական, միկրոկենսաբանական, մանրէաբանական, վիրուսաբանական, սնկաբանական և այլ ուղղվածության լաբորատորիաներ տարբեր ենթակայության), տեխնիկական և բնական բնույթի արտակարգ իրավիճակների գործիչներ, քիմիա-դեղագործական և կենսատեխնոլոգիական արդյունաբերության հաստատություններ, հիվանդությունների վերահսկման մարմիններ և կազմակերպություններ, լիցենզա ունեցող մասնավոր բժշկական գործունեությամբ զբաղվող իրավաբանական և ֆիզիկական անձինք:

² Սոցիալ-մշակութային, սպասարկման ոլորտի, սպորտա-առողջարարական նշանակության օբյեկտներ, այդ թվում հյուրանոց, հանրակացարան, առողջարան, հանգստյան տուն, պանսիոնատ, բաղնիք, շոգեբաղնիք, լվացքատուն, վարսավիրանոց, գեղեցկության սրահ, լողավազան, ակվապարկ, մարզահամալիր, ֆիթնես կենտրոն, սոլյարի, հասարակական զուգարան և բնակչության սպասարկման ոլորտի այլ հաստատություններ, ադմինիստրատիվ և ֆինանսական կազմակերպություններ, կրեդիտային կազմակերպություններ, բոլոր տեսակի սոցիալական հաստատություններ (տարեցների, հաշմանդամների տուն, մակատուն, գիշերակաց տներ անտունների համար, ինտերնատ և այլն), կրթական հաստատություններ, մարզասարքեր, թատրոն, կինոթատրոն, ակումբ, օժանդակա-կուսակազմակերպություններ, սննդի արտադրություն, հասարակական սննդի և առևտրի հաստատություններ, տնտեսական օրինակներ, ներառյալ՝ սննդամթերքի և մթերքային հումքի տեղափոխման, արդյունաբերական և մթերային շուկաներ, պահոցներ և պահեստներ, քրեակադրատիկական հիմնարկներ, արդարադատության մարմիններ և հաստատություններ, ուժային զերայտեսչությունների ստորաբաժանումներ, այդ թվում՝ ԱԽՆ, ԱԱԾ, Ոստիկանություն, Զինված ուժերի և Ոստիկանական զորքերի զորամասեր և հաստատություններ:

- 4) Ձեռքային եղանակով ճաշի և խոհանոցային սպասքի ախտահանման և վլացման համար, ներառյալ մեկ գործողության մեջ համակցված:
- 5) Ձեռքային եղանակով լաբորատոր և դեղատնային անոթների, դրանց վլացման պարագաների ախտահանման և վլացման համար:
- 6) Ձեռքային եղանակով արտահագուստի, սպիտակեղենի (անհատական, անկողնային) ախտահանման համար, այդ թվում արյունով և/կամ այլ կենսաբանական արտադրություններով աղտոտված:
- 7) Հիվանդի խնամքի պարագաների, անջրաթափանց ներքնակերեսների (այդ թվում պոլիուրետանային ծածկույթով), անկողնային և տակդիր մոմլաթների, խաղալիքների (բացառությամբ փափուկ), մարզագույքի և մարզասարքերի, ռետինե և պոլիպրոպիլենային գորգերի, սանիտարատեխնիկական սարքավորումների (այդ թվում ակրիլային լոգարանների և լոգախցիկների, բուժական, ցեխային, հանքային, հիդրոմերսոլ լոգարանների) ախտահանման, վլացման համար, այդ թվում համակցված մեկ գործողության մեջ:
- 8) Ե և Ե բժշկական թափոնների ախտահանման համար. մեկանգամյա բժշկական նշանակության արտադրատեսակների, այդ թվում լաբորատոր անոթների, սրվակների և ներարկիչների՝ ներարկումից հետո, ծախսված նյութերի, բամբակյա-թանձիվե անձեռոցիկների, բամբակյա խճուճների, վիրակապական նյութի, մեկանգամյա օգտագործման սպիտակեղենի, անձնակազմի ձեռնոցների, արտահագուստի, կոսմետիկական և վարսավիրական մեկանգամյա օգտագործման գործիքների՝ դրանց օգտահանումից առաջ:
- 9) Կենսաբանական հեղուկների (արտադրությունների) ախտահանման համար, այդ թվում արյան, արյան մակարդուկների, շիճուկի, վերնստվածքային հեղուկի, հարպտոլային ջրերի, խորխի, միզա-ֆեկալ և փսխման զանգվածների, վլացման հեղուկների, այդ թվում էնդոսկոպիկ, կոկորդի ողողման և այլն:
- 10) Կենսաբանական արտադրությունների տարաների ախտահանման համար, այդ թվում մանկական գիշերանոթների, տականոթների, բադաձև միզանոթների:
- 11) Բեռնարկղերի, Ե և Ե դասի բժշկական թափոնների հավաքման սարքավորումների և հարմարանքների վլացման, ախտահանման և դեզոդորացման համար, այդ թվում համակցված մեկ գործողության մեջ:

12) Մաքրման գույքի, սարքավորումների և նյութերի, (լաթ, մոպ, խոզանակ, դույլ, ֆլաունդեր և այլն), անհատական պաշտպանության միջոցների ախտահանման և լվացման համար:

13) Ախտահանման և լվացման համար՝ սենքերի մակերեսների և օբյեկտների, սարքավորումների մակերեսների, այդ թվում սննդամթերքի հետ շփում ունեցող, հանրային սննդի հաստատություններում, մթերային առևտրի, սպառողական շուկաների, կոմունալ և սպասարկման ոլորտի, սպորտի և հանգստի օբյեկտների, ադմինիստրատիվ և գրասենյակային հաստատություններում, կրթական հաստատություններում, սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններում, մարդկանց զանգվածային կուտակումների վայրերում:

14) Մաքրության բոլոր դասերի սենքերում (A ,B, C և D) ոչ մանրէագերծ դեղերի արտադրության դեղագործական և կենսատեխնոլոգիական արդյունաբերության սենքերի և սարքավորումների ախտահանման և լվացման համար:

15) Վարսավիրանոցների, մերսման, կոսմետիկ, գեղեցկության, դաջվածքի սրահների, լվացքատների, սանթողարանների և բնակչության սպասարկման ոլորտի այլ օբյեկտների սենքերի, սարքավորումների, գործիքների, արտահագուստի ախտահանման համար:

16) Սառնարանային և սառցախցիկների, սննդամթերքի պահման սառեցման սարքերի, սառնարանային սենքերի ախտահանման համար՝ դրանց ամբողջությամբ անջատելուց, հալելուց և նախնական լվացումից հետո, շարժական բժշկական սառնարան-պայուսակների ախտահանման համար, այդ թվում պատվաստանյութերի և դեղերի տեղափոխման և ժամանակավոր պահման:

17) Դիահերձարաններում և ախտաբանանատոմիական ծառայությունների շենքերում, դատաբժշկական փորձաքննության հաստատություններում, աճյունասափորանոցներում (կոլումբարիումներում), դիակիզարաններում, թաղման բյուրոներում և սգո ծառայություններում, շենքերում, սգո պարագաների վաճառքով զբաղվող խանութներում և այլ շենք-շինություններում, որտեղ տրամադրվում են ծիսական և թաղման ծառայություններ, մակերեսների, այդ թվում սեկցիոն սեղանների, օբյեկտների և արտադրությունների ախտահանման համար, ինչպես նաև ավտոդիակառքերի մշակման համար:

- 18) Բոլոր տեսակի տրանսպորտի (հասարակական, սանիտարական, մասնագիտացված, փաթեթավորված սննդամթերքի տեղափոխման տրանսպորտի), այդ տրանսպորտի հարմարանքների և սարքավորումների լվացման, ախտահանման և դեզինվազիայի համար, այդ թվում համակցված մեկ գործողության մեջ:
- 19) Կաշվե, կաշվի փոխարինիչներից, ռետինե, պլաստիկից և այլ պոլիմերային նյութերից կոշիկների ախտահանման համար (այդ թվում լոգանքի սանդալներ և հողաթափեր)՝ սնկային վարակի (դերմատոֆիտիայի) կանխարգելման նպատակով:
- 20) Ախտահանիչ պատնեշների և ախտահանիչ գորգերի լցման համար:
- 21) Սենքերում օդի ախտահանման համար՝ աէրոզոլային ցողացրման մեթոդով:
- 22) Օդափոխության և օդորակման համակարգերի մակերեսների ախտահանման համար (կենցաղային օդորակիչ, սպլիտ-համակարգեր, մուլտիզոնային սպլիտ-համակարգեր, տանիքի օդորակիչներ և այլն):
- 23) Բորբոսով ախտահարված օբյեկտների մշակման համար և սենքերի՝ բորբոսասնկերով ախտահարման կանխարգելման նպատակով:
- 24) Արտաքին միջավայրի օբյեկտների, հողի, մակերեսների և այլ օբյեկտների, այդ թվում էնտերոբիոզի հարուցիչներով բաղարկված սենքերի ներսում օբյեկտների, մակերեսների, սարքերի և սարքավորումների ախտահանման և դեզինվազիայի համար:
- 25) Աղբահեռացման համակարգերի, աղբահավաքման սարքավորումների, տրանսպորտի և աղբահավաքատեղիների լվացման, ախտահանման և դեզոդորացման համար, այդ թվում համակցված մեկ գործողության մեջ:
- 26) Բժշկական կազմակերպություններում, մանկական, հանրակրթական և առողջարարական հաստատություններում, քրեակատարողական և այլ հիմնարկներում ու կազմակերպություններում հիմնական մաքրում իրականացնելու համար:
- 27) Սննդամթերքի արտադրությունում, հասարակական սննդի և առևտրի հիմնարկություններում սննդի համար օգտագործվող ձվերի կեղևի ախտահանման համար:
- 28) Կոռոզիակայուն նյութերից բժշկական արտադրատեսակների, այդ թվում էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական մաքրման համար:

29) Կոռուզիակայուն նյութերից բժշկական արտադրատեսակների, ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական, այդ թվում պտտվող գործիքները, կոշտ և ճկուն էնդոսկոպները և դրանց կից գործիքները, ալգինատային և սիլիկոնային նյութերից, պոլիէթերային խեժից ատամնաբուժական արտատպվածքները, կոռուզիակայուն մետաղներից, կերամիկայից, պլաստմասից ատամնապրոթեզային կիսահումքերը, ատամնաբուժական թքարտածծիչ համակարգերի, ասպիրացիոն սարքերի, կուտակային տարանների (թքաման) ախտահանման համար՝ ձեռքային եղանակով:

30) Կոռուզիակայուն նյութերից բժշկական նշանակության արտադրատեսակների, այդ թվում պտտվող արտադրատեսակների, կոշտ և ճկուն էնդոսկոպների նախամանրէազերծման մաքրման համար (եզրափակիչ՝ էնդոսկոպների բարձր մակարդակի ախտահանումից (ԲՄԱ) առաջ), չհամակցված ախտահանման հետ՝ ձեռքային և մեքենայացված (ուլտրաձայնային մեքենաների մեջ) եղանակներով

31) Կոռուզիակայուն նյութերից բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական գործիքները, այդ թվում պտտվող) նախամանրէազերծման հետ համակցված ախտահանման համար՝ ձեռքային եղանակով:

32) Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախամանրէազերծման (եզրափակիչ՝ էնդոսկոպների ԲՄԱ-ից առաջ) հետ համակցված ախտահանման համար՝ ձեռքային եղանակով:

33) Էնդոսկոպների և դրանց կից գործիքների ԲՄԱ համար ձեռքային եղանակով:

34) Կոռուզիակայուն նյութերից բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական գործիքները, կոշտ և ճկուն էնդոսկոպները, դրանց կից գործիքները) մանրէազերծման համար՝ ձեռքային եղանակով:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ

ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6. Միջոցի աշխատանքային լուծույթները պատրաստում են էմալապատ (առանց էմալի վնասման), ապակյա կամ պլաստմասե տարանների մեջ՝ սենյակային ջերմաստիճանի խմելու ջրին միջոցի համապատասխան քանակների ավելացման ճանապարհով (աղյուսակ 1):

7. Ստացված աշխատանքային լուծույթի խտության հսկումը, ինչպես նաև նրա պահման ընթացքում իրականացվում է «ԲԻՆԱՐ օքսի-ԹԵՍ» ինդիկատորային շերտիկների միջոցով:

Աղյուսակ 1

Միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստում

| Աշխատանքային լուծույթի խտություն, (ըստ պատրաստուկի) | Պատրաստման համար անհրաժեշտ միջոցի խտանյութի և ջրի քանակ | | | |
|---|---|-----------|---------------|-----------|
| | 1 լ լուծույթ | | 10 լ լուծույթ | |
| | Միջոց (մլ) | Ջուր (մլ) | Միջոց (մլ) | Ջուր (մլ) |
| 0,25 | 2,5 | 997 | 25 | 9975 |
| 0,5 | 5 | 995 | 50 | 9950 |
| 1,0 | 10 | 990 | 100 | 9900 |
| 2,0 | 20 | 980 | 200 | 9800 |
| 3,0 | 30 | 970 | 300 | 9700 |
| 4,0 | 40 | 960 | 400 | 9600 |
| 5,0 | 50 | 950 | 500 | 9500 |
| 6,0 | 60 | 940 | 600 | 9400 |
| 8,0 | 80 | 920 | 800 | 9200 |
| 10,0 | 100 | 900 | 1000 | 9000 |
| 25,0 | 250 | 750 | 2500 | 7500 |
| 30,0 | 300 | 700 | 3000 | 7000 |

8. Միջոցի աշխատանքային լուծույթները բժշկական արտադրատեսակների ախտահանման (այդ թվում համակցված նախամանրէազերծման, ԲՄԱ-ի հետ) և մանրէազերծման համար կարելի է օգտագործել բազմակի, սահմանված պիտանելիության ժամկետի սահմաններում՝ 30 օր պատրաստման պահից հաշված, ընկղմման եղանակով օբյեկտների մշակման ժամանակ, մինչև դրանց արտաքին տեսքի փոփոխությունը (գույնի փոփոխություն, լուծույթի պղտորացում, նստվածքի առաջացում) և/կամ աշխատանքային լուծույթի խտության նվազումը նորմայից (էքսպրես-հետազոտություն «ԲԻՆԱՐ օքսի-ԹԵՍ» թեստ-շերտիկներով):

9. Միջոցի աշխատանքային լուծույթները էնդոսկոպիական սարքավորումների նախամանրէազերծման (եզրափակիչ՝ էնդոսկոպների ԲՄԱ-ից առաջ) և ավտահանման հետ համակցված մաքրման համար կիրառում են բազմակի, մինչև արտաքին տեսքի փոփոխությունը, սակայն մեկ աշխատանքային հերթափոխից ոչ ավելի: Ուլտրաձայնային սարքավորումների մեջ մեքենայացված եղանակով բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծման համար աշխատանքային լուծույթները օգտագործում են մեկ անգամ: Աշխատանքային լուծույթի խտությունը նորմայից նվազման դեպքում և/կամ առաջին տեսանելի աղտոտվածության նշանների առաջացման ժամանակ լուծույթը փոխվում է, այդ թվում, եթե այդ փոփոխությունները հայտնաբերվել են մինչև լուծույթի նշված օգտագործման ժամկետի սպառումը:

3. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ ՏԱՐԲԵՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

10. Միջոցի աշխատանքային լուծույթները կիրառվում են սույն հրահանգի 4-րդ կետում նշված օբյեկտների ավտահանման և մաքրման (լվացման) համար՝ սույն հրահանգի 2-17-րդ աղյուսակներում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

11. Սենքերում մակերեսները, կոշտ գույքը, կահավորանքի պարագաները, սարքերի, սարքավորումների, տրանսպորտային միջոցների մակերեսները շփում են միջոցի լուծույթով թրջված լաթով՝ միջոցի աշխատանքային լուծույթի 100 մլ/մ² ծախսի նորմայով կամ ոռոգում 300 մլ/մ² հաշվարկով, օգտագործելով հիդրոպուլտ, ավտոմաքս կամ 100-150 մլ/մ² «Կվազար» տեսակի ցողացրիչի օգտագործման ժամանակ: Ավտահանումից հետո մակերեսից միջոցի աշխատանքային լուծույթի լվացում պարտադիր չէ, բացառությամբ սպասքի, սննդամթերքի, մթերային հումքի հետ շփվող մակերեսների: Հատուկ մաքրման պարագաներով (բեռնասայլակ, լաթ, տարբեր մանրաթելերից անձեռոցիկ) սենքերում մակերեսների ավտահանում և լվացում իրականացնելիս միջոցի ծախսը և թթվածին պարունակող պատրաստուկների հետ կիրառման հնարավորությունը անհրաժեշտ է հաշվի առնել, ելնելով մաքրման սարքավորումներ արտադրողների առաջարկներից: Ժամանակակից տեքստիլ նյութերի կիրառումը, որոնցից պատրաստվում են լաթերը և անձեռոցիկները, կարող է զգալիորեն կրճատել աշխատանքային լուծույթի ծախսը ընդհուպ մինչև 15 մլ/մ²:

12. Բարուրասեղանները մանրակրկիտ շփում են, ապահովելով դրանց հավասարաչափ թրջում, մշակում են սույն հրահանգի 2-10-րդ աղյուսակներում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

13. Սանիտարական տրանսպորտը, այդ թվում վարակիչ պացիենտների տեղափոխումից հետո, մշակում են սույն հրահանգի 2-13-րդ աղյուսակներում ներկայացված համապատասխան վարակների ժամանակ առաջարկվող ռեժիմներին համապատասխան:

14. Սանիտարա-տեխնիկական սարքավորումները մշակում են խոզանակով և շփում լաթով՝ թրջված միջոցի լուծույթով՝ մշակվող մակերեսի 100 մլ/մ² ծախսի նորմայով, կամ մշակում են ոռոգման եղանակով՝ 300 մլ/մ² (հիդրոպուլտ, ավտոմաքս), 100-150 մլ/մ² («Կվազար» տեսակի ցողացրիչ): Ախտահանումից հետո սանիտարա-տեխնիկական սարքավորումների մակերեսները լվանում են ջրով կամ շփում ջրով թրջված մաքուր լաթով՝ սույն հրահանգի 2-12-րդ աղյուսակներում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

15. Սպիտակեղենը, հատուկ արտահագուստը, ներառյալ կենսաբանական արտադրություններով աղտոտվածները, մեկը մյուսից հետո հաջորդաբար ընկղմում են ախտահանիչ լուծույթի մեջ 5 րկգ չոր սպիտակեղեն հաշվարկով: Ախտահանումից հետո սպիտակեղենը լվանում և պարզաջրում են սույն հրահանգի 2-13-րդ աղյուսակներում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

16. Ոչ մեծ խաղալիքներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ՝ խոչընդոտելով դրանց լողալուն, խոշոր խաղալիքները՝ շփում են միջոցի աշխատանքային լուծույթով թրջված լաթով, կամ ոռոգում միջոցի աշխատանքային լուծույթով: Ախտահանումից հետո մանր խաղալիքները լվանում են խմելու հոսող ջրով, խոշորները՝ շփում են խմելու ջրով առատորեն թրջված լաթով (սույն հրահանգի 2-12 աղյուսակներ):

17. Սննդի մնացորդներից ազատված ճաշի, խոհանոցի և մեկանգամյա սպասքն ամբողջությամբ ընկղմում են ախտահանիչ լուծույթի մեջ՝ 2 և 1 հավաքածուի համար հաշվարկով: Ախտահանումից հետո սպասքը 3 րոպե տևողությամբ լվանում են խմելու հոսող ջրով: Մեկանգամյա սպասքն ախտահանումից հետո օգտահանում են (սույն հրահանգի 2-6, 8-13 աղյուսակներին համապատասխան): Շնորհիվ միջոցի վնասող

հատկությունների առկայության հնարավոր է ճարպագերծման, վացման և ախտահանման գործողությունների համակցումը մեկ փուլում:

18. Լաբորատոր, դեղատնային անոթները, այդ անոթների վացման պարագաները մշակում են միջոցի աշխատանքային լուծույթի մեջ ամբողջությամբ ընկղմման մեթոդով՝ 2 և 10 միավորին հաշվարկով: Մեծ տարաները ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթի մեջ այնպես, որպեսզի միջոցի լուծույթի հաստությունը արտադրատեսակների վրա լինի առնվազն 1 սմ: Ախտահանումից հետո 3 րոպե վանում են հոսող խմելու ջրով (սույն հրահանգի 2-13-րդ աղյուսակներ):

19. Հիվանդի խնամքի պարագաները (ռետինե ջեռակ, ջերմաչափ, հոգնայի պլաստմասե ծայրադիր), մարզագույքը և մարզասարքերը (կամ դրանց հանովի մասերը) մշակում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ ընկղմման մեթոդով կամ շփում են ախտահանիչ լուծույթով առատ թրջված մաքուր լաթով: Ախտահանումից հետո մշակված մակերեսները վանում են ջրով կամ շփում ջրով առատ թրջված լաթով (սույն հրահանգի 2-12-րդ աղյուսակներին համապատասխան): Հիվանդի արտադրությունների տարաները մշակում են միջոցի աշխատանքային լուծույթով՝ սահմանված ազդեցության ժամանակահատվածով՝ ընկղմման եղանակով (սույն հրահանգի 2-12-րդ աղյուսակներին համապատասխան):

20. Անջրաթափանց ներքնակերեսների, անկողնային և տակդիր մոմլաթների մակերեսը շփում են միջոցի լուծույթով առատ թրջված գործվածքային կամ ոչ գործվածքային անձեռոցիկներով՝ մշակվող մակերեսի 100 մ/մ² ծախսի նորմայով: Ախտահանիչ պահաժամից հետո մշակված մակերեսը շփում են ջրով թրջված մաքուր խոնավ անձեռոցիկով (սույն հրահանգի 2-12-րդ աղյուսակներին համապատասխան):

21. Մաքրման պարագաները (լաթ, անձեռոցիկ) թրջում են միջոցի լուծույթի մեջ, մաքրման պարագաները և սարքավորումները, կախված դրա չափերից, ընկղմում են միջոցի լուծույթի մեջ, շփում են միջոցի լուծույթի մեջ առատորեն թրջված լաթով կամ մշակում խոշորկաթիլային ոռոգման եղանակով: Ախտահանումից հետո մշակված մակերեսները և լաթը պարզաջրում են ջրում և չորացնում (սույն հրահանգի 2-13-րդ աղյուսակներին համապատասխան):

22. Ռետինե և պոլիպրոպիլենային գորգերը, ռետինե, պլաստմասե և այլ սինթետիկ նյութերից կոշիկներն ախտահանում են միջոցի լուծույթի մեջ ընկղմման եղանակով,

խոչընդոտելով դրանց լողալուն, ախտահանումից հետո դրանք լվանում են և չորացնում (սույն հրահանգի 7, 13-րդ աղյուսակներին համապատասխան): Կաշվից և կաշվի փոխարինիչներից կոշիկի ներքին մակերեսը շփում են երկակի՝ միջոցի լուծույթով առատորեն թրջված խծուծով՝ սույն հրահանգի 7-րդ աղյուսակին համապատասխան: Ազդեցության ժամանակից հետո մշակված մակերեսը շփում են ջրով թրջված գործվածքով և չորացնում:

23. Ե և Ե դասի բժշկական թափոնները (վիրակապական նյութ, անձեռոցիկ, բամբակյա խծուծ, մեկանգամյա օգտագործման սպիտակեղեն, մեկանգամյա օգտագործման ճաշի սպասք և լաբորատոր անոթներ, մեկանգամյա օգտագործման արտադրատեսակներ) օգտահանումից առաջ ախտահանում են, ընկղմելով միջոցի աշխատանքային լուծույթի մեջ՝ սույն հրահանգի 14, 14ա աղյուսակներում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

24. Փսխման զանգվածները, սննդի մնացորդները խառնում են միջոցի աշխատանքային լուծույթի հետ 1:2 հարաբերությամբ, պահում սահմանված ազդեցության ժամանակով (էքսպոզիցիայով): Արյունը, արյան շիճուկը, էրիթրոցիտային զանգվածը, միկրոկենսաբանական լաբորատորիաների թափոնները (պատվաստանյութ, կուլտուրայի շտամներ, վիրուսաբանական նյութ և այլն) խառնում են միջոցի աշխատանքային լուծույթի հետ 1:2 հարաբերությամբ, պահում ազդեցության ժամանակով: Խորխը խառնում են միջոցի աշխատանքային լուծույթի հետ 1:2 հարաբերությամբ, պահում սահմանված ազդեցության ժամանակով: Մեզը, կոկորդի ողողման հեղուկը, վրացման ջրերը, այդ թվում էնդոսկոպիական և այլ, խառնում են միջոցի աշխատանքային լուծույթի հետ 1:1 հարաբերությամբ, պահում սահմանված ազդեցության ժամանակով: Բժշկական տզրուկները հիբոդոթերապիայից հետո (դասակարգվում են որպես Ե դասի բժշկական թափոններ) ընկղմում են միջոցի 5%-ոց աշխատանքային լուծույթի մեջ 60 րոպե ազդեցության ժամանակով, այնուհետև օգտահանում:

25. Բժշկական թափոնների հավաքման և հեռացման բեռնարկերը մշակում են ընկղմման կամ լցման եղանակով՝ սույն հրահանգի 14-րդ աղյուսակում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

26. Կուլեզների ախտահանման ժամանակ հաշվի է առնվում կուլեզներ արտադրողի առաջարկները: Կուլեզների արտաքին մակերեսների ախտահանումը բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների (ԲՄՊՎ) կանխարգելման նպատակով իրականացվում է յուրաքանչյուր օր, ընթացիկ մաքրման հետ միաժամանակ շփման եղանակով՝ գրամբացասական և գրամդրական մանրէների ոչնչացում ապահովող ռեժիմով՝ սույն հրահանգի 16-րդ աղյուսակին համապատասխան: Կուլեզների ներքին մակերեսների և հարմարանքների ախտահանումը իրականացնում են եզրափակիչ ախտահանման ձևով, շփման եղանակով, առանձին, լավ օդափոխվող, ուլտրամանուշակագույն ճառագայթիչներով հագեցած սենքում: Կուլեզների ներքին մակերեսների և հարմարանքների ախտահանումը իրականացնում են երեխայի ընդունումից առաջ: Մշակումից հետո փակում են խցի կափարիչը ազդեցության ժամանակով: Ախտահանման պահաժամից հետո կափարիչը բացում են և բոլոր ներքին մակերեսները եռակի շփում մանրէազերծ ջրով առատ թրջված մանրէազերծ լաթով, այնուհետև չորացնում մանրէազերծ անձեռոցիկով: Միացնում են բակտերիասպան լամպը և ճառագայթում խցիկը 30 րոպե: Փակում են խցիկի կափարիչը, միացնում սարքը և պահում 1 ժամ տևողությամբ: 60 րոպեից հետո կուլեզի մեջ կարելի է տեղավորել երեխային: Կուլեզի հարմարանքները՝ խոնավացուցիչի ռեզերվուարը, մետաղական ալեմարիչը, օդահավաք խողովակները, ռետինե խողովակները, թթվածնի նախապատրաստման հանգույցը, ամբողջությամբ ընկղմում են համապատասխան աշխատանքային լուծույթով տարայի մեջ (սույն հրահանգի 16-րդ աղյուսակին համապատասխան): Ախտահանումից հետո կուլեզի բոլոր հարմարանքները լվանում են մանրէազերծ ջրի մեջ երկանգամյա ընկղմումով, յուրաքանչյուրը 3-ական րոպե, մղում են ջուրը խողովակների միջով: Հարմարանքները չորացնում են մանրէազերծ գործվածքային անձեռոցիկներով:

27. Նարկոզա-շնչառական սարքերի ռետինե խողովակները, միացնող տարրերը, դիմակները և այլ համալրող մասերն ընկղմում են միջոցի լուծույթի մեջ՝ լցնելով խոռոչներն ամբողջությամբ՝ սույն մեթոդական հրահանգի 16-րդ աղյուսակում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Ախտահանումը և մաքրումը համակցվում են մեկ գործողության մեջ: Յուրաքանչյուր արտադրատեսակի վաճառման իրականացվում է 3 րոպե տևողությամբ բամբակ-թանգիվե խժուժներով միջոցի նույն աշխատանքային լուծույթի մեջ, լվացում խոզանակով չի թույլատրվում: Այնուհետև

իրականացվում է մանրակրկիտ պարզաջրում 10 րոպե տևողությամբ մանրէազերծ ջրի երկու բաժնում: Ռետինե խողովակները, պարկերը փաթաթում են մարէազերծ սավանի մեջ և չորացնում հատուկ ձողերի վրա կախված վիճակում: Համալրող մասերը դասավորում են մանրէազերծ սավանի վրա և չորացնում փակ վիճակում: Ռետինե խողովակները և համալրող մասերը պահում են ասեպտիկ պայմաններում:

28. Սառնարանային և սառցարանային սարքավորումների, այդ թվում սննդամթերքի պահպանման, ախտահանումն իրականացվում է ամբողջովին անջատելուց, ապաստոցումից և հիմնային կամ չեզոք միջոցներով լվացումից հետո, շփման կամ ոռոգման եղանակով՝ սույն հրահանգի 2-12-րդ աղյուսակներում մակերեսների համար ներկայացված ռեժիմներին համապատասխան: Ռեժիմն ընտրվում է, ելնելով բաժանմունքի ուղղվածությունից և սարքավորման նշանակությունից: Մշակումն ավարտելուց հետո սարքավորման ներքին մակերեսները լվացվում են մաքուր ջրով (հանովի մասերը) կամ շփվում ջրում առատ թրջված մաքուր անձեռոցիկով: Բժշկական նպատակների համար նախատեսված շարժական պայուսակ-սառնարանների սինթետիկ նյութերից մակերեսները ախտահանվում են 1,5%-ոց (ըստ պատրաստուկի) միջոցի լուծույթով թրջված թանգիվե անձեռոցիկով շփման եղանակով և 30 րոպե ախտահանիչ պահաժամով: Մակերեսների խիստ աղտոտվածության դեպքում թույլատրվում է դրանց կրկնակի մշակում: Շարժական պայուսակ-սառնարանների մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել դրանց արտադրողների առաջարկների ցուցումները:

29. Սենքերի օդի ախտահանումն իրականացվում է աէրոզոլայի ցողացրման եղանակով (միջոցի աշխատանքային լուծույթների ցողացրում աէրոզոլների գեներատորների կամ այլ ցողացրիչ սարքավորումների օգնությամբ) սույն հրահանգի 11-րդ աղյուսակում ներկայացված ռեժիմներին համապատասխան, 10 մլ/մ³ ծախսի նորմայով: Սենքերը նախապես հերմետիկ են դարձնում, սերտ փակելով պատուհանները և դռները, անջատում են ներիոս-արտաձիգ օդափոխությունը: Օդի ախտահանումից հետո առաջարկվում է օդափոխել սենքը 60 րոպե տևողությամբ և իրականացնել խոնավ մաքրում: Օդափոխության և օդորակման համակարգերի ախտահանումն իրականացվում է դրանց ամբողջական անջատման ժամանակ, օդափոխության ճարտարագետների ներգրավմամբ և ղեկավարությամբ: Մշակման համար կիրառում են սույն հրահանգի 11-րդ աղյուսակում ներկայացված ռեժիմները:

Օդափոխության համակարգերի օդատարների ախտահանումն իրականացվում է ոռոգման եղանակով (մանրդիսպերսային ցողացրում), օդափոխության սարքավորումներինը՝ ոռոգման, շփման կամ ընկղմման եղանակներով: Օդային ֆիլտրը ախտահանվում է ոռոգման կամ ընկղմման եղանակով կամ փոխվում է: Ածխե ֆիլտրը ենթակա է փոխման առանց նախնական ախտահանման: Ռադիատորի ճաղավանդակը և կոնդենսատի կուտակիչը շփում են ախտահանիչ լուծույթով առատ թրջված լաթով: Ախտահանումից հետո համակարգերի մշակված մասերը վանում են ջրամատակարարման ջրով և չորացնում:

30. Բորբոսասնկերի դեմ պայքարի համար սենքերում կոշտ մակերեսները սկզբում մանրակրկիտ մաքրում են միջոցի լուծույթով թրջված կոշտ խոզանակով, այնուհետև մշակում միջոցի լուծույթով՝ սույն հրահանգի 13-րդ աղյուսակում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

31. Ախտահանիչ գորգերի լցման համար կիրառվում է միջոցի 0,5%-ոց լուծույթ: Լցվող միջոցի լուծույթի ծավալը կախված է գորգի չափից (պետք է նշված լինի նրա շահագործման հրահանգի մեջ): Աշխատանքային լուծույթը փոխելու հաճախականությունը կախված է գորգի օգտագործման ինտենսիվությունից, միջինը միջոցի լուծույթի փոխումը կատարվում է 3 օրը 1 անգամ՝ սույն հրահանգի 2-րդ աղյուսակին համապատասխան:

32. Էնտերոբիոզի հարուցիչով բաղարկված հողի վարակազերծումը (դեզինվազիան) իրականացվում է միջոցի 5%-ոց աշխատանքային լուծույթով (էքսպոզիցիա) 3 օր ազդեցության ժամանակով և 4 լ միջոցի աշխատանքային լուծույթ 1մ² հողի համար ծախսի նորմայով: Օբյեկտների ախտահանման ռեժիմները էնտերոբիոզի հարուցիչների նկատմամբ ներկայացված են սույն հրահանգի 12-րդ աղյուսակում:

33. Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմները միջոցի լուծույթներով անաէրոբ վարակի ժամանակ ներկայացված են սույն հրահանգի 10-րդ աղյուսակում:

34. Սենքերի հիմնական մաքրման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի 17-րդ աղյուսակում:

35. Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմները միջոցի լուծույթներով մանրէային հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա, սիբիրյան խոց) ժամանակ ներկայացված են սույն հրահանգի 8, 9-րդ աղյուսակներում:

36. Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմները միջոցի լուծույթներով լեգիոնելոզի ժամանակ ներկայացված են սույն հրահանգի 11-րդ աղյուսակում:

37. Նախապես տեսակավորված, վնասվածքների բացակայության համար ստուգված, օվոսկոպիայի ենթարկված և 0,5%-ոց կալցինացված սողայի տաք լուծույթով կամ ցանկացած այլ, սահմանված կարգով գրանցված և դրա համար թույլատրված վրացող միջոցով վրացված սննդի համար օգտագործվող ձվերի կեղևի ախտահանումը իրականացնում են ձվերն ամբողջությամբ ընկղմելով 20-25°C ջերմաստիճան ունեցող միջոցի 1%-ոց աշխատանքային լուծույթի մեջ՝ 10 րոպեով: Նշված ժամանակը լրանալուց հետո ձվերը 3 րոպե վանում են հոսող ջրով, տեղավորում տարայի մեջ ջուրը հոսելու և չորանալու համար: Ախտահանման համար միջոցի լուծույթը օգտագործվում է մեկ անգամ ձվերի յուրաքանչյուր խմբաքանակի համար:

4. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ, ՄԱՐԶԱ-
ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ
ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

38. Միջոցի աշխատանքային լուծույթները կիրառում են սույն հրահանգի 4-րդ կետում ներկայացված օբյեկտների և մակերեսների վրացման, վարակազերծման, ախտահանման և դեզոդորացման համար:

39. Կանխարգելիչ ախտահանումը և հիմնական մաքրումները բնակչության սպասարկման ոլորտի, մարզա-առողջարարական հիմնարկներում, կրթական, մշակութային և հանգստի հաստատություններում, քրեակատարողական հիմնարկներում, սոցիալական սպասարկման օբյեկտներում և կազմակերպություններում, սննդի արտադրությունում, հասարակական սննդի և առևտրի հաստատություններում, մթերային շուկաներում, ադմինիստրատիվ օբյեկտներում, բեռնատար և ուղևորատրանսպորտում, սննդամթերքի տեղափոխման տրանսպորտում և այլ տեղերում իրականացնում են սույն հրահանգի 2-րդ աղյուսակում ներկայացված մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի) վարակների ժամանակ ախտահանման համար առաջարկվող ռեժիմներին համապատասխան: Սննդամթերքի տեղափոխման տրանսպորտը, բեռնատար և ուղևորատրանսպորտը մշակում են միջոցի աշխատանքային լուծույթներով ոռոգման և (կամ) շփման եղանակով՝ 11-րդ

կետում նշված ծախսի նորմային համապատասխան: Սննդամթերքի տեղափոխման տրանսպորտի, ինչպես նաև սննդամթերքի հետ շփվող այլ օբյեկտների ախտահանումից հետո, մշակված մակերեսները լվանում են ջրով և չորացնում: Վարակիչ հիվանդների տեղափոխման սանիտարական տրանսպորտը մշակում են համապատասխան վարակների ժամանակ առաջարկվող ռեժիմներին համապատասխան: Սանիտարական տրանսպորտի կանոնավոր կանխարգելիչ ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի 2-րդ աղյուսակում ներկայացված մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի) վարակների ժամանակ առաջարկվող մակերեսների մշակման ռեժիմներին համապատասխան:

40. Բաղնիքում, շոգեբաղնիքում, լողավազանում, ակվապարկերում, սանթողարանում, մարզահամալիրներում կանխարգելիչ ախտահանումը և հիմնական մաքրումն իրականացնում են սույն հրահանգի 7-րդ աղյուսակում ներկայացված դերմատոֆիտիաների ժամանակ առաջարկվող օբյեկտների ախտահանման ռեժիմներին համապատասխան և, անհրաժեշտության դեպքում, սույն հրահանգի 13-րդ աղյուսակում ներկայացված մակերեսները բորբոսով ախտահարման ժամանակ առաջարկվող ռեժիմներին համապատասխան:

41. Մակերեսների, սարքավորումների, գործիքների ախտահանումը սպասարկման ոլորտի օբյեկտներում (վարսավիրանոց, գեղեցկության, կոսմետիկ և մերսման սրահներ և այլն) իրականացնում են դերմատոֆիտիաների ռեժիմներով:

42. Դեղագործական և ոչ մանրէազերծ դեղերի արտադրության կենսատեխնոլոգիական արդյունաբերության A ,B, C, D դասի մաքրության սենքերում կանխարգելիչ ախտահանում իրականացնելու ժամանակ սենքերում մակերեսների, կոշտ գույքի սարքերի և սարքավորումների արտաքին մակերեսների ախտահանումը և լվացումն իրականացնում են սույն հրահանգի 2-րդ աղյուսակում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

43. Դիահերձարաններում և ախտաբանանատոմիական ծառայությունների շենքերում, դատաբժշկական փորձաքննության հաստատություններում, աճյունասափորանոցներում (կոլումբարիումներում), դիակիզարաններում, թաղման բյուրոներում և սգո ծառայությունների շենքերում, սգո պարագաների վաճառքով զբաղվող խանութներում և այլ շենք-շինություններում, որտեղ տրամադրվում են

ծիսական և թաղման ծառայություններ մակերեսների և օբյեկտների ախտահանման համար միջոցը կիրառվում է սույն հրահանգի 3, 4-րդ աղյուսակներում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Ավտոդիակառքերը մշակվում են սանիտարական տրանսպորտի մշակման ռեժիմներով:

44. Արտադրությունները և այլ կենսաբանական հեղուկները ախտահանում և օգտահանում են սույն հրահանգի 15-րդ աղյուսակում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

45. Օբյեկտների ախտահանումը հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա, սիբիրյան խոց) և լեգիոնելոզի ժամանակ իրականացվում է սույն հրահանգի 8, 9, 11-րդ աղյուսակներում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

46. Աղբահավաքման սարքավորումների, գույքի և աղբահավաքատեղիների ախտահանումը, մաքրումը, լվացումը և դեզոդորացումն իրականացվում է սույն հրահանգի 2-րդ աղյուսակում ներկայացված ռեժիմներին համապատասխան՝ ոռոգման եղանակով, 300 մլ/մ² ծախսի նորմայով:

5. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ
ԱԽՏԱՀԱՆՄԱՆ, ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ (ԵԶՐԱՓԱԿԻՉ՝ ԲՄԱ-ԻՑ
ԱՌԱՋ), ԲՄԱ ԵՎ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

47. Միջոցի աշխատանքային լուծույթները կիրառում են բժշկական արտադրատեսակների, ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական գործիքները, այդ թվում պտտվող, ատամնաբուժական բորմեքենաների ծայրակալների, կոշտ և ճկուն էնդոսկոպների, նրանց կից գործիքների ախտահանման և նախամանրէազերծման համար (եզրափակիչ՝ էնդոսկոպների ԲՄԱ-ից առաջ), այդ թվում համակցված մեկ գործողության մեջ, կոշտ և ճկուն էնդոսկոպների, նրանց կից գործիքների նախնական մաքրման համար, ոչ մանրէազերծ էնդոսկոպիական հետազոտությունների էնդոսկոպների և նրանց կից գործիքների բարձր մակարդակի ախտահանման (ԲՄԱ) համար, բժշկական նշանակության արտադրատեսակների մանրէազերծման համար, ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական գործիքները, մանրէազերծ էնդոսկոպիական միջամտությունների կոշտ և ճկուն էնդոսկոպները և մանրէազերծ ու ոչ մանրէազերծ միջամտությունների գործիքները: Բժշկական արտադրատեսակների, այդ թվում կոշտ և ճկուն էնդոսկոպների մաքրումը

(նախնական, եզրափակիչ, նախամանրէագերծման), ախտահանումը (այդ թվում ԲՄԱ) և մանրէագերծումն իրականացնում են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի 48-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջների: Թույլատրվում է միջոցի աշխատանքային լուծույթների օգտագործումը միայն այն բժշկական արտադրատեսակների, այդ թվում էնդոսկոպների մշակման համար, որոնց արտադրողը թույլատրում է այդ նպատակների համար ջրածնի պերօքսիդի հիմքով միջոցների կիրառումը: Չի թույլատրվում պաշտպանական ծածկույթների վնասվածքներ և թերություններ ունեցող արտադրատեսակների մշակում միջոցի լուծույթով: Միջոցի աշխատանքային լուծույթների ջերմաստիճանը արտադրատեսակների ձեռքային եղանակով մշակման ժամանակ պետք է լինի առնվազն +18°C: Ախտահանումը, այդ թվում մաքրման հետ համակցված, բարձր մակարդակի ախտահանումը և մանրէագերծումը ձեռքային եղանակով իրականացվում է պլաստմասե կամ էմալպատ (առանց էմալի վնասման) փակվող կափարիչներով տարաներում: Մանրէագերծման ժամանակ օգտագործում են միայն մանրէագերծ տարաներ, որոնք նախօրոք մանրէագերծվում են գոլորշային եղանակով:

48. Միջոցի կիրառումը բժշկական արտադրատեսակների նախամանրէագերծման (եզրափակիչ՝ էնդոսկոպների ԲՄԱ-ից առաջ) հետ համակցված և չհամակցված ախտահանման համար. բժշկական արտադրատեսակների, այդ թվում էնդոսկոպիական սարքավորումների, ախտահանումը, այդ թվում համակցված մաքրման հետ, իրականացվում է ձեռքային (ընկղմում) եղանակով՝ սույն հրահանգի 18-20-րդ աղյուսակներում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Ձեռքային եղանակով ախտահանման համար, այդ թվում նախամանրէագերծման հետ համակցված, բժշկական արտադրատեսակները, բացառությամբ էնդոսկոպները, դրանց կիրառումից հետո ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ, էլեկտրաարտածծիչների և ներարկիչների միջոցով լցնելով այդ լուծույթով արտադրատեսակների բոլոր խողովակներն ու խոռոչները՝ հեռացնելով օդի պղպջակները: Քանդվող արտադրատեսակները լուծույթի մեջ ընկղմում են քանդված վիճակում: Փականային մասեր ունեցող արտադրատեսակներն ընկղմում են բացված վիճակում, նախապես լուծույթի մեջ դրանցով անելով մի քանի աշխատանքային շարժում՝ արտադրատեսակի դժվարհասանելի մասերը լուծույթի լավ թափանցման համար: Ատամնաբուժական արտատպվածքների և ատամնապրոթեզային

կիսահումքերի ախտահանումն իրականացվում է՝ 25 արտատպվածքից ոչ ավելի 2 և աշխատանքային լուծույթին հաշվարկով: Արտադրատեսակների մշակման տարաների ծավալը և միջոցի լուծույթի ծավալը նրա մեջ պետք է բավարար լինեն լուծույթի մեջ արտադրատեսակների ամբողջությամբ ընկղմում ապահովելու համար, արտադրատեսակների վրա լուծույթի շերտի հաստությունը պետք է լինի առնվազն 1 սմ: Նարկոզա-շնչառական սարքավորումները անմիջապես օգտագործելուց հետո քանդում են, հանում ռետինե խողովակները, միացնող տարրերը, կափույրային տուփերի կափարիչները, անջատում և դատարկում են կոնդենսատի կուտակիչները: Նախնական լվացումն իրականացնում են սառը, այնուհետև տաք ջրի շիթով՝ սարքն օգտագործելուց հետո հնարավոր կարճ ժամանակահատվածում: Ախտահանումն իրականացնում են արտադրատեսակներն ընկղմելով միջոցի աշխատանքային լուծույթի ավելցուկային քանակության մեջ՝ դրանով լցնելով խոռոչները: Ախտահանիչ պահածամից հետո լվացումն իրականացնում են նույն լուծույթի մեջ, որի մեջ թրջել են սարքերի տարրերը և մասերը. մասերը լվանում են բամբակ-թանգիվե խծուծներով, ծախսելով առնվազն 30 վայրկյան յուրաքանչյուր արտադրատեսակի վրա: Թանգիվե խծուծները լվացման համար օգտագործում են մեկ անգամ: Չի թույլատրվում մաքրման և լվացման համար օգտագործել սուր պարագաներ, ինչպես նաև խոզանակներ: Էնդոսկոպները, էնդոսկոպներին կից գործիքները և պարագաները անմիջապես օգտագործելուց հետո ենթարկում են նախնական մաքրման, այդ թվում միջոցի 0,25%-ոց աշխատանքային լուծույթով. տեսանելի աղտոտվածությունները էնդոսկոպի արտաքին մակերեսից հեռացնում են միջոցի լուծույթով թրջված գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով, կառավարման վահանակից դեպի դիստալ հատված ուղղությամբ: Կափույրները, փականները հանում են էնդոսկոպի վրայից և անմիջապես ընկղմում դրանք և էնդոսկոպը միջոցի լուծույթի մեջ, ապահովելով բոլոր մակերեսների շփումը լուծույթի հետ: Էնդոսկոպի խողովակների միջով ձեռքային եղանակով մղում են միջոցի աշխատանքային լուծույթ՝ համաձայն տվյալ էնդոսկոպի արտադրողի կողմից տրամադրված մշակման հրահանգի: Էնդոսկոպին կից գործիքներն ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ, ապահովելով նրա հետ ամբողջական շփումը, մաքրում են դրանք միջոցի աշխատանքային լուծույթի մակերեսի տակ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով լուծույթի ցայտում: Ախտահանման պահածամից հետո արտադրատեսակները հանում են տարայից և դրանք լվանում

միջոցի մնացորդներից հոսող խմելու ջրով առնվազն 5 թուփե, հատուկ ուշադրություն դարձնելով խողովակների լվացման վրա (ներարկիչի կամ էլեկտրաարտածիչի միջոցով), թույլ չտալով, որ բացթողնված ջուրը լցվի լվացված արտադրատեսակներով տարայի մեջ: Նարկոզա-շնչառական սարքավորումները և նրա համալրող մասերը մանրակրկիտ պարզաջրում են հոսող ջրով 5 թուփե և երկու մաս թորած ջրի մեջ, որից հետո չորացնում են մանրէազերծ սավանով: Էնդոսկոպների և դրանց կից գործիքների ու պարագաների լվացումն իրականացվում է սկզբում հոսող խմելու ջրով, այնուհետև՝ թորած: Էնդոսկոպի արտաքին մակերեսները չորացնում են փափուկ գործվածքով, խողովակները օդով փչում և չորացնում են օդային ատրճանակների օգնությամբ: Բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծումը (եզրափակիչ՝ էնդոսկոպների ԲՄԱ-ից առաջ) իրականացնում են գրանցված և այդ նպատակի համար բժշկական կազմակերպություններում կիրառման թույլատրված ցանկացած միջոցով, այդ թվում «ԲԻՆԱՐ օքսի» միջոցով, դրանց ախտահանումից և այդ միջոցի մնացորդներից խմելու ջրով պարզաջրելուց հետո՝ տվյալ միջոցի կիրառման հրահանգին համապատասխան: Բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծում (եզրափակիչ՝ էնդոսկոպների ԲՄԱ-ից առաջ) իրականացնելիս հաշվի է առնվում այդ սարքավորումների արտադրողի առաջարկությունները: Իրականացվող Ախտահանման հետ չհամակցված նախամանրէազերծման (եզրափակիչ՝ էնդոսկոպների ԲՄԱ-ից առաջ) ռեժիմները ձեռքային եղանակով ներկայացված են սույն հրահանգի 21, 22-րդ աղյուսակներում, մեքենայացված եղանակով՝ ուլտրաձայնային սարքավորումների կիրառմամբ՝ 23, 24-րդ աղյուսակներում: Բժշկական արտադրատեսակների մաքրումը մեքենայացված եղանակով իրականացնում են սահմանված կարգով գրանցված ցանկացած ուլտրաձայնային սարքավորման մեջ (օրինակ՝ «Մեդէլ», «Ուլտրաէստ», «Կրիստալ-5», «Սերգա» և այլն): Նախամանրէազերծման որակի հսկողությունն իրականացվում է արյան մնացորդային քանակների առկայության նկատմամբ ազոպիրամային կամ ամիդոպիրինային փորձերի միջոցով:

49. Միջոցի կիրառում էնդոսկոպների ԲՄԱ համար. բարձր մակարդակի ախտահանման ենթակա են ոչ մանրէազերծ էնդոսկոպիական միջամտությունների համար նախատեսված էնդոսկոպները և դրանց կից հարմարանքները (կափույր, փական): Կոշտ և ճկուն էնդոսկոպների և դրանց կից հարմարանքների ԲՄԱ

իրականացվում է ձեռքային եղանակով՝ սույն հրահանգի 18-րդ աղյուսակում ներկայացված ռեժիմով: Ուշադրություն. էնդոսկոպների ԲՄԱ-ից առաջ մաքրման ենթակա էնդոսկոպների վրայից մանրակրկիտ կերպով հեռացվում է խոնավության մնացորդները (չորացնել): Ձեռքային եղանակով ԲՄԱ իրականացնելու համար էնդոսկոպն ամբողջությամբ ընկղմում են սահմանված խտության միջոցի աշխատանքային լուծույթի մեջ, դրանով լցնելով բոլոր խողովակներն ու խոռոչները, խուսափելով օդային խցանների առաջացումից և արտադրատեսակի արտաքին մակերեսից անձեռոցիկով հեռացնելով օդի պղպջակները: Լուծույթի շերտի հաստությունը արտադրատեսակների վրա պետք է լինի առնվազն 1 սմ: Ախտահանման պահաժամից հետո էնդոսկոպը հանում են լուծույթից, հեռացնելով լուծույթը խողովակներից, և տեղափոխում մանրէազերծ ջրով մանրէազերծ տարայի մեջ՝ միջոցի մնացորդներից լվանալու համար: Մանրէազերծ ջրի բացակայության դեպքում թույլատրվում է եռացրած խմելու ջրի օգտագործում: Ստամոքս-բարակաղիքային հետազոտությունների էնդոսկոպները պարզաջրվում են ջրամատակարարման խմելու ջրով, բրոնխոսկոպները՝ մանրէազերծ, եռացրած կամ հակաբակտերիալ ֆիլտրերով մաքրված ջրով: Էնդոսկոպի պարզաջրման համար ջրի բաժինն օգտագործվում է մեկ անգամ: Լվացման ժամանակ օգտագործված ջուրը չպետք է լցվի մաքուր ջրով տարայի մեջ: Միջոցի մնացորդներից լվացված արտադրատեսակները հանվում են ջրից, տեղավորում մանրէազերծ սավանի կամ անձեռոցիկի վրա, հեռացնում խոնավությունը էնդոսկոպի արտաքին մակերեսներից մանրէազերծ կտորով, խողովակներից՝ օդ փչելով կամ օդի ակտիվ ասպիրացիայով: Էնդոսկոպի խողովակներից խոնավության առավել ամբողջական հեռացման համար իրականացնում են լվացում ֆարմակոպեական հողվածի պահանջներին համապատասխանող 70-95%-ոց էթիլ սպիրտով, և օդի փչում: Մշակումից հետո էնդոսկոպը ենթակա է կրկնակի օգտագործման կամ պահման՝ երկրորդային բաղարկումը բացառող պայմաններում: Աշխատանքային հերթափոխի ընթացքում մշակված էնդոսկոպը հավաքված և մանրէազերծ կտորով փաթեթավորված վիճակում կարելի է պահել մինչև հերթական օգտագործումը՝ 3 ժամից ոչ ավել: Նշված ժամանակահատվածում չօգտագործված էնդոսկոպը ենթարկվում է ԲՄԱ-ի: Մանրէազերծ գործվածքի մեջ փաթեթավորված էնդոսկոպների պահպանման ժամկետը չպետք է գերազանցի 72 ժամը: Նշված ժամկետից հետո էնդոսկոպը ենթակա է ԲՄԱ-ի կրկնակի:

